ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 22.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/48

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15733-17 գրությամբ «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2785 գրության հիման վրա, 29.08.2017թ. թիվ 03/26-3/15733-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն 05.09.2017թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնային առաջարկ է ներկայացրել նաև «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն, որը որոշ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին կամ երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերությունը նշել է, որ հետագայում պարզվել է, որ իբր Ընկերության պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը և Ընկերությունն ունի ժամկետանց հարկային պարտավորություններ, որի հիման վրա նախաձեռնվել է «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Ընկերության կարծիքով առկա չեն Ցուցակում ներառելու գործընթացը սկսելու փաստական հիմքերը՝ հետևյալ հիմնավորմամբ.

Չհերքելով հարկային պարտավորությունների վերաբերյալ տվյալների առկայության հանգամանքը՝ «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն պնդում է, որ չունի իր կողմից չկատարված հարկային պարտավորություններ, քանի որ վկայակոչված պարտավորության հիմքում դրված է ՀՀ ֆինանսների նախարարության (ներկայումս՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ) խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության 2015 թվականի հուլիսի 21-ի թիվ 6104700 ստուգման ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որի հետ համաձայն չլինելով՝ Ընկերությունը նախաձեռնել է դատական կարգով վիճարկման գործընթաց: Այսինքն՝ հարկային պարտավորության առաջադրման միակ հիմք հանդիսացող Ակտը դատական կարգով Ընկերության կողմից վիճարկվում է, որի արդյունքում դեռևս վերջնական

դատական ակտ չի կայացվել: Ակտի բողոքարկման արդյունքում հարուցված թիվ ՎԴ/3580/05/15 վարչական գործով առկա է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 18.01.2017թ. որոշում, որի դեմ պատասխանող ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 22.02.2017թ. ներկայացվել է վճռաբեկ բողոք, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից մինչ օրս որոշում չի կայացվել: Նման պայմաններում Ընկերությունը գտնում է, որ Ակտը դեռևս որևէ իրավական հետևանք չպետք է առաջացնի Ընկերության համար: Այդ եզրահանգման համար իրավական հիմք է հանդիսանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմն այն մասին, որ վիճարկման հայցը վարույթ ընդունելով կասեցվում է վիճարկվող ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը (...):

Այսպիսով՝ Ընկերության կողմից Ակտի դատական կարգով վիճարկումը հանգեցրել է Ակտի կատարման կասեցմանը, ուստի մինչև այդ գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը չի կարող հաստատված համարվել Ակտում նշված հարկային պարտավորություն ունենալու փաստը, իսկ նման պնդմամբ չի կարող Ընկերության համար որևէ անբարենպաստ հետևանք առաջանալ:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված Ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության կողմից հայտը ներկայացվել է մինչև 2017թ. ապրիլի 1-ը՝ 2017թ. մարտի 13-ին:

Ընկերության կողմից հայտով ներկայացել է ֆինանսական միջոցների առկայության մասին հայտարարություն, որի բաղադրիչներից մեկը վերաբերում է հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում ակտիվների և պարտավորությունների հարաբերակցությանը: Ըստ այդ՝ Ընկերության կողմից նշված հայտարարությունով հավաստվել է, որ հայտը ներկայացնելու նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը, սակայն այդ պահի դրությամբ Ընկերությունը չի ունեցել քննարկվող ժամանակահատվածի՝ 2016թ. վերաբերյալ վերջնական հաշվապահական տվյալները: Հայտը ներկայացնելու ժամանակ Ընկերության տարեկան հաշվետվությունը դեռևս կազմված չի եղել և վերջնական տվյալներ առկա չեն եղել: Ընկերությունն այդ պահին տիրապետել է 2015թ. տարեկան հաշվետվության

տվյալներին, ըստ որի՝ Ընկերության պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը: Այսինքն, չունենալով 2016թ. վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, Ընկերությունը հայտարարությունները ներկայացրել է դրան նախորդող տարվա տվյալների հիման վրա: Ընդ որում 2016թ. տարեկան հաշվետվությունը ներկայացվել է 2017թ. ապրիլի 14-ին, որից ակնհայտ է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի տվյալները համապատասխանել են սահմանված պահանջներին, ինչն էլ բացառում է ներկայացված տվյալների կեղծ որակելը:

Ընկերությունը նշել է նաև, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությունը չի պարունակում «կեղծ տվյալ» եզրույթի հասկացությունը, չի սահմանում, թե որ հատկանիշների առկայության պայմաններում է հնարավոր եզրահանգել տվյալի կեղծ լինելու մասին: Իրավունքի դոկտրինալ աղբյուրներում տվյալի կեղծ լինելու վերաբերյալ արտահայտված դիրքորոշումներից երևում է, որ այդպիսի տվյալ ներկայացնող անձը պետք է համոզված լինի (սուբյեկտիվ ընկալում) դրա բովանդակության ու իրականության անհամապատասխանության մասին: Այսինքն՝ անձի գործողությունները պետք է գիտակցաբար (մեղքի առկայություն) ուղղված լինեն հենց իրականությանը չհամապատասխանող տվյալի ներկայացնելուն՝ ակնկալելով այլ կերպ իր համար անհրաժեշտ բարենպաստ հետևանքի առաջացում: Տվյալ դեպքում միանշանակ բացակայում է Ընկերության կողմից կեղծ տվյալ ներկայացնելը՝ վերոնշյալ պատճառաբանությամբ:

Եթե անգամ ընդունվի, որ Ընկերության կողմից խախտում է թույլ տրվել (ինչի հետ Ընկերությունը համամիտ չէ վերոնշյալ հիմնավորումներով), ապա «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելը հնարավոր է խախտում թույլ տալու փաստը հաստատված համարելուց հետո մեկ տարվա ընթացքում գնման գործընթացի մասնակցելու նպատակով հայտ ներկայացնելու դեպքում: Խախտման առկայությունը (տվյալ դեքպքում՝ կեղծ տվյալ ներկայացնելը) հնարավոր է փաստել ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով (այսուհետ նաև՝ Կարգ) նախատեսված կարգավորումների հիման վրա իրականացված ուսումասիրությունների արդյունքում (որի

շրջանակում ներկայացվում է սույն կարծիքը), Ընթացակարգը դեռևս չի ավարտվել և արդյունքները չեն ամփոփվել, ուստի հնարավոր չէ այս պահի դրությամբ հերքել կամ հաստատել «խախտման» առկայությունը:

Նշվածից հետևում է, որ այս պահի դրությամբ բացակայում է ինչպես «խախտման», այնպես էլ գնման նոր ընթացակարգի մասնակցելու վերաբերյալ հիմնավորումը, ուստի և առկա չեն Ընկերությանը Ցուցակում ներառելու փաստական հիմքերը:

«Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն վերոհիշյալ գրությանը կից ներկայացրել է Ընկերության կողմից 2017թ. հաշվետվության ներկայացման ծանուցման, թիվ ՎԴ/3580/05/15 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի վճռի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման պատճենները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 05.09.2017թ. ժամը 11:30-ի և 19.09.2017թ. ժամը 11:40-ի նիստերի վերաբերյալ, 05.09.2017թ. ժամը 11:30-ին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2785 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության համաձայն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, իսկ հայտը ներկայացվելու նախորդող հաշվետու տարվա ընթացքում առկա պարտավորությունները գերազանցում են ակտիվներին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 05.09.2017թ. ժամը 11:30-ի և 19.09.2017թ. ժամը 11:40-ի նիստերի վերաբերյալ, 05.09.2017թ. ժամը 11:30-ին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2017/48 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/48 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն ***13.03.2017թ.*** հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Ընկերությունը հայտի թիվ 3.3 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով հայտնել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.03.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից մի շարք չափաբաժինների մասով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ԿԱ պետական եկամուտներին ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 20.05.2017թ. հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 24.05.2017թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը ***13.03.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 25 442 572 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև Ընկերության հայտը ներկայացնելու նախորդող հաշվետու տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմում է 2 030 470 730 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 2 084 017 192 ՀՀ դրամ:***

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

7. ՀՀ ֆինանսների նախարարության խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության պետի 12.06.2015թ. թիվ 6104700 հանձնարարագրի հիման վրա 23.06.2015թ. -06.07.2015թ. «Թալգրիգ Գրուպ» ՍՊԸ-ում (ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 03.03.2016թ. կատարված կանոնադրության փոփոխության գրանցման հիման վրա «ԹԱԼԳՐԻԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն վերանվանվել է «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ի) իրականացված՝ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգման արդյունքում կազմվել է 21.07.2015թ. թիվ 6104700 ստուգման ակտը, որով Ընկերության նկատմամբ հաշվարկվել է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ 14 400 000 ՀՀ դրամի չափով:

8. Ընկերությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել և վերացնել ՀՀ ֆինանսների նախարարության խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության 21.07.2015թ. թիվ 6104700 ակտը:

9. ՀՀ վարչական դատարանի 22.03.2016թ. թիվ ՎԴ/3580/05/15 վճռով Ընկերության հայցը բավարարվել է մասնակի:

10. ՀՀ վարչական դատարանի 22.03.2016թ. թիվ ՎԴ/3580/05/15 վճռի դեմ հայցի բավարարված մասով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից բերվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 18.01.2017թ. որոշմամբ մերժվել է:

11. ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի թիվ ՎԴ/3580/05/15 վարչական գործով 18.01.2017թ. կայացված որոշման դեմ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 20.02.2017թ. ներկայացվել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 09.06.2017թ. որոշմամբ ընդունվել է վարույթ:

12. «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն Աբովյանի համայնքապետարանի կողմից Աբովյանի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15/21-17/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով ***13.04.2017թ.*** հայտ է ներկայացրել:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15733-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/22785 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Նույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած

մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Ընթացակարգի շրջանակներում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից իրականացված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 24.05.2017թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը ***13.03.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 25 442 572 ՀՀ դրամի չափով:***

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Խորհուրդը գտնում է, որ «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ի կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը չի կարող դիտարկվել որպես կեղծ տվյալի ներկայացում, քանի որ Ընկերության կողմից դատական կարգով վիճարկվել է ՀՀ ֆինանսների նախարարության խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության 21.07.2015թ. թիվ 6104700 ակտը, որով Ընկերության նկատմամբ հաշվարկվել է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ 14 400 000 ՀՀ դրամի չափով, ընդ որում գործն ըստ էության լուծող դատական ակտ դեռևս չի կայացվել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Այսպիսով www.datalex.am դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվության համաձայն՝ ըստ հայցի «Թալգրիգ Գրուպ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ ֆինանսների նախարարության խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության 21.07.2015թ. թիվ 6104700 ստուգման ակտը վերացնելու պահանջի մասին թիվ ՎԴ/3580/05/15 վարչական գործով կայացված ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշման դեմ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 20.02.2017թ. ներկայացվել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ

դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 09.06.2017թ. թիվ ՎԴ/3580/05/15 որոշմամբ ընդունվել է վարույթ:

Հետևաբար վիճարկված վարչական ակտի գործողությունը, որի հիման վրա ըստ էության Ընկերության նկատմամբ հաշվարկվել է լրացուցիչ հարկային պարտավորություն, համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների, կասեցված է, ուստի թիվ ՎԴ/3580/05/15 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտի բացակայության պայմաններում, Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը չի կարող դիտարկվել որպես Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի ներկայացում, ուստի Ընկերությանը սույն մասով Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 24.05.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմել է 2 030 470 730 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 2 084 017 192 ՀՀ դրամ,*** մինչդեռ «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն հայտի թիվ 3.3 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով հայտնել և հավաստել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերության կողմից հայտի թիվ 3.3 հավելվածի «բ» կետով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի

ներկայացում, քանի որ Ընկերության հայտը ներկայացվելուն (2017թ.) նախորդող հաշվետու տարվա (2016թ.) ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքին և Ընկերության կողմից Խորհրդի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից տրված այլ տեղեկատվություն չի ներկայացվել:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում Ընկերությունը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը ***13.03.2017թ.*** հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-

ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով ընթացակարգի, որի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում, որից հետո ***13.04.2017թ.*** կրկին հայտ է ներկայացրել Աբովյանի համայնքապետարանի կողմից Աբովյանի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ԱԲՀ-ՇՀԱՊՁԲ-15/21-17/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, որպիսի փաստն արձանագրվել է ՀՀ ֆինանսների նախարարության 05.05.2017թ. թիվ 03/73-3/7881-17 գրությամբ «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի շրջանակներում ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 07.07.2017թ. կայացված թիվ ՍՑ-ԱՄ-2017/06 որոշմամբ:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով,*** եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ ***որակավորման չափանիշների,*** իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի ***գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները*** կամ տեխնիկական բնութագրերը ***որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15733-17 գրությամբ «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06900805) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**